


Տարեկան գինն է 10 ռուբլի:  
Վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:  
Առանձին համարներով խրաքանչիւրը 5 կոպէկ:

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակիէ եւ տօն օրերից  
առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետո:

Օտարաշարքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցեով. — В редакцію «Меркантиль», в Тифлисе, կամ Redaction de «Meghou Hahastani», à Tiflis. (Caucase).



Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ դրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցեով: Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները: Խմբագրութիւնը չի վերադառնում յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցաւանջը:

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ: Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով: Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, ակովկասու: Հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են պ. Շաղկերեկեանի պովիլիոնում:

«ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ»  
ԱՆԷՔՈՒՄԵՐՈՅՈՒՆՈՒՄ:

Երկու տարի շարունակ պարապելով ար. Ս. Բաբայանցի «Մանկական Պարտեջում» պարտիզպանուհու պատմութիւնը հոգեւոր իշխանութեան թոյլտուութեամբ հոկտեմբերի 1-ից բանուում է «Մանկական Պարտեջ» Ալեքսանդրապոլում 4—6 տարեկան երեխաների համար, երկու տարուան դասընթացով: Յանկացողները իրանց մանուկներին Մանկական պարտեջ յանձնելու պայմաններին մասին կարող են տեղեկանալ պ. Մակար Տէր-Սարգսեանից իւր տան մէջ ամեն օր: Բացի տօն օրերից շաբաթ յետոյ 4—6 ժամը:

Տեղին նստաւիտ Տէր-Մարտիրոսեանց:

Խմբագրութիւնս խնդրում է այն բաժանորդներին, որոնք դեռ եւս չեն վճարած լրագրիս տարեկան բաժանորդական գումարը, շտապեն փութով հասցնել ա յ ն խմբագրութեան:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐԹԻԻՆ:

Կաթողիկոսական խնդիր:  
Ներքին Տեսչութիւն. — Թըղթակցութիւններ Թիֆլիսից եւ Ստաւրոպոլից:  
Քաղաքական կարգ: — Քաղաքական լուրեր:  
Մանր լուրեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԹՆԵՐ ԼՈՒՐՏԻ

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԵՊԻԿ:

XIV

Երանանալիս արեւ վաղուց էր մէջ մտել մեծը աշխարհքս բռնել: Իկնատու գեղամէջը քանի գնում էր հանդարտ վում էր, իսկանի դրաթիւն կտրում էր. էս միջանը էրկու հողի իկնատու ջղրախումը մին մնու փթաթում լաց ին ըլում:

— Գնաս բարով, Աստօծ քի հետ, առաւ նրանցից մինը հեկեկալով:

— Երեսու բարով, իմ աղիւզ ախպիր, թորում եմ քի ըմանաթ մեր հաղարած տեղերը, պարտական ըլիս ահեղ դատաստանին: Թէ ամեն հետ դէնը անցկենաւ ին մի բերան էլ ա ասես ոչ «անգաճդ կանչի, եթիմ, էրնակ էն օրը, որ ըտղի հող ինք անուսի»: Թէ խում մեռած կըլիմ կ'սես «Աստօծ ողորմ», էս խօսքերը տոնել էլաւ եթիմի ու Սիսի ճըտովը լնգնելը, լաց ըլիւ:

Թեիլ վախտ իրար ծոռով ընգած սուս ու փուս մնացել ին կաղնած: Վերջապէս եթիմը ձեռները կը քաշեց Սիսի ճըտից, մասնաբերով իր աչքերի ըրտատունքը սրկեց ու ըսէնց կեց:

— Մնաք բարով սարեր ու ձորեր, պաշտես ու զգիր, ալվան ծաղիկներ, օր

Խառն լուրեր:  
Յայտարարութիւններ:  
Բանասիրական. — Եթիմ Լուրցի:

ԹԻՖԼԻՍ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1884 թ.

Մեր առաջին է կաթողիկոսական նոր ընտրութիւնը: Անտարակոյս ա մեն հայ մտածում է այս մասին ե ցանկանում, որ արժանաւոր անձն Լուսաւորչի գահը բարձրանայ — դա շատ բնական է: Ամեն հայ պարտքն է ամեն կերպով նպաստելու աշխատելու, որ եկեղեցու եւ սորա հօտի շահերը սիրող եւ որոնող անձը նստի հայրապետական գահը: Ինչպէս ամեն հայ անհատի վերայ պարտք կայ այս մասին, աւելի եւս մեծ պարտք կայ հայ մամուլի վերայ, որ բազմաթիւ կարող է ինչեւեւ եւ բազմաթիւ ուղեցոյց եւ դեկա վար — ուստի եւ ամեն հայ պարբերական թերթ էլ ունի պարտականութիւն նպաստելու, որ կաթողիկոսական ընտրութեան խնդիրը յաջող վախճան ստանայ, յօգուտ եւ կեղեցւոյ եւ հայ ժողովրդեան: Բայց մամուլը իբրեւ դեկավար եւ բերան բազմաց, ունի աւելի մեծ պատասխանատուութիւն էլ քան մէն մի

էլ կլի, որ ձեռք ֆօտը առնեմ, ձեռք մէջը խոտը ընգնեմ օրս անցկացնեմ, ձեռք ձեռքերիս բռնեմ, ձեռք մտիկ տամ, ցաւերս մտիցս գծեմ. միս... մենձ մուր, ինչ ես խչչոցդ վեր արեւ, ձեռք ձեռք գծեմ էրէրին խօսացնում է: Երբ որ էլ գիտեմ, որ քու ջրով մենձացած եթիմը էգուց հեռանալ պիտի քիսնից, երբ էլ կ'արժանանամ քու դրողի ֆօնդերին. ուստի կ'առնեմ գամ ջրիցըդ խմեմ ասեմ օխախ... սիրտս հովաքա... դէ, մնաք բարով չիմա էլ, ես գնում եմ, միայն գիտեմք, որ յաւիտեան մտիցս չեմ գցել ձեզ. դու էլ մնաս բարով, Սիս, էս էր վերջի խօսքը եթիմի, որ համբուրեց Աիսի էրկու թից ու ջողուցին իրարից: «մնաս բարով» «գնաս բարով» ասելով իրար:

Սիրելի կարդացող եթիմի պէս ասու մայրը, որ իր թիկնգուքի ոսկրտանքը չօլումը ու անտառներումը արջերի եղիցը ընգած ա հաստացել, հմի գնում ա քաղաք բան տղորելու, ուսում առնելու, եւ ինչ չեմ գնալ, Աստօծ խու գլխիս խուսով չի կենալ, ով կուզէ հետս գալ ես գնում եմ քաղաք իմ եթիմի հետ, զուգարար թէ ուսում չեմ առնել, մի չկօշու պատերի հօտն էլ ա խու կ'առնեմ, դէ, մնացող մնաս բարով, ես էգուց քաղաք եմ գնում:

XV

Մէկէլ առաւօտը որցակը նոր մի բերան կանչել էր: Եթիմանց տան դռանը էրկու թամբած ձիան հազիր արած պատրաստ ձեռնի բռնած ունէր մի նօթար:

1) Արձագանք տալ տալի:

անհատ. ուստի եւ նա պէտք է աւելի շրջանկաւ հեռատես լինի եւ ամեն մի խօսք կշռելով եւ դժուարութեամբ ասի համոզված լինելով, որ հաղարներ հեռակէլու են նորա կարծեաց — եւ որցա սխալանքի պատասխանատուութիւնը մամուլի վերայ է:

Անցեալից օգուտ քաղելու խոհեմութիւնն աւելի մամուլին կը պատկանի: քան մէն մի անհատի: Մենք միայն չ'ունենք իրենցու այտեղ թէ ինչ դիրք բռնեց մամուլը անցեալ անցաջը ընտրութեանց ժամանակ: Մեր կարծիքով սխալ էր մեր մամուլը մեծ մասի ընթացքը, երբ իւրաքանչիւր պարբերական թերթ մի մի կաթողիկոսացու հանդէս բերելով, հասարակական վիճաբանութեանց եւ անուանարկութեանց առիթ տուեց, որ երբէք գործին յաջողութիւն չէ խոստանում: Վիճաբանութեանց տեղը ժողովրդը պէտք է լինի եւ ոչ հրապարակները: — Կ. Պօլսոյ Համագումարը Ազգային ժողով — նա մանաւանդ ս. Էջմիածնում հաւաքվող համագումարը պատգամաւորաց ժողովները, չէնք կարծում, որ կազմված լինին այնպիսի անձինքներից, որոնք ճանաչելիս չըլինին մեր յոյժ փառաթիւ կաթողիկոսացու եպիսկոպոսներին

— Նանի ջան, ամակ հալալ արաւ:  
— Գնա, բալաջան... գնա... Աստօծու աջն ու խաչը ըլի քի վրայ, սուրբ Նըշանը ու Սրբհանը ըլին քու քոմակը: Աստօծը ամեն քու բաներիդ աջողութիւն տայ... քարի վրա գնաս քարը կ'անչի... էրեքս մի բացարցու, էս սիրուն աչքերիդ մի համարեմ, սրտիս կարօտը առնեմ... խի ես լաց ըլում, քի մատաղ, եղ տեղ խու չես գնում, փառք Աստօծ քաղկի կէսը մի բարեկամին ու ճանաչելին են, նրաք ինձանից լաւ կը պահեն... լաց մի լըվի քու չար տանեմ... լաց մի...  
Հեկեկալը եթիմին խղղղում էր չէր կարում ձէն հանի, իր ծնողի խոտորին մնացել էր լուռած քարացած:

— Ախ... նանի ջան, քու մատիտ ընդի չանք չի ցաւիլ նրանց սիրտը: Ես քու հարած ըղձիցը չեմ փոխիլ սաղ քաղկի հետ, ծնողի մի չուս ասիլը որդու հմար կեանք ա, քանց սաղ քաղկցոնց ջան ասիլը:

— Գէ չուստ արաւ, եթիմ, յուս արի, ձիանը հազիր ա կղացանք, օրը ճաշ դառաւ, հէնց գնանք, որ վախճ քար ու քանդ էլած քարիկով մուտը դուս ըլնիք, էն անտէրը ճամփայ խու չի կըրակ ա, նրա կարողը գուրեգու ըլի, էսէնց մի խօսուցի ձէն լուռց դնելը:

Հեկեկ էր վախտը եթիմը հէնց գիտէր դեռ հիւ ձիանը թամբած չենդեռ ժամանակ ու ի մի երկու միմուտ իր թանգաղին մօր խոտորին կենալու, աղի արտատունքով նրա ծրծրը գրչել: հիւս էր լուռը ձէնը նրա սիրտը թրփ-թրփոցը գծեց. էլ չի կարողացաւ իրան պա-

մեր մամուլի ներկայացուցիչների չափ եւ նրանցից պակաս նախանձախնւղի լինին եկեղեցւոյ եւ ժողովրդի շահերին: Գուցէ նոքա աւելի եւս կարեւոր պաշտօնական տեղեկութիւնք ունենան հարցի վերաբերութեամբ: քան մեր խմբագրներից շատերը: Աւստի եւ մեր կարծիքով մամուլը սխալ դիրք բռնած կը լինի. եթէ անձներ հանդէս բերելով կը նպաստէ պողոտեան եւ ապօրոտեան կուսակցութիւնների կազմվելուն ժողովրդի մէջ:

Անցեալը մեզ ջոյց է տալիս, որ իւրաքանչիւր պարբերական թերթ պէտք է իւր մի կանգիտատը հանդէս բերէ եւ չափազանցօրէն գովէ նրան, եւ ի միջի այլոց էլ պախարակէ միւսներին: որպէս զի իւր կանգիտատի կշիռը աւելանայ: Բերած փաստերն էլ ինչ են — Կիրակոսը գովով այս ինչ վիճակի առաջնորդ այս է գործել եւ այլն: միշտ դեռ Մարկոսը գովով առաջնորդ այսինչ վիճակի այնքան գործած չէ: Բայց չեն մտածում, որ եթէ Կիրակոսը Մարկոսի վիճակում լինէր, գուցէ սրանից շատ պակաս գործած լինէր. ամեն տեղ հանգամանքները միակերպ նպաստաւոր կամ անընդհատ չեն գործողութեանց համար: Այդպիսի պաշտպանութիւնք եւ պա-

հիւ:

— Ախ, նանի ջան, գնում եմ... մընաս բարով, ասաւ եթիմը ու ձէնը կրտից: հեկեկալուց էլ կարաց ոչ ձէն հանէ:

— Գնաս բարով, բալա ջան, գնաս... գնա... գնա, մարդ դառ ուսում առ, քու հօրական փայ տունը քիս ճամփայ պահում, դու պտես նրան աղըղացնիլ, դու պտիս քու հօրական տան ճրագը վառ պահիլ, գնա, հմա, տես, յաւիտեան պարտական ես քու աթանին, քու աղ: գնա մտիցդ չը գծել, չիտոլիլ էլ դառ: նաս արեւաւոր գեղըցոնց միշտ միտդ պտիս բերիլ: Ամեն հաբա պարտական ես ձեռքիցդ էկածը չը խնայել օչում, ըստօք թէ չես կատարիլ, գիտենաս, որ դու քու հօր որդին չես, դու իմ յարգանքիցը չես էլել: Միտդ բի, որ քու խեղճ մերը 9 ամիս քի իր յարգանքով մըն ա ածել, ծիծառ տուել, էդ տար: քու հասցրել, որ ձեռքիցդ էկածը օչում չը խնայես, քու դուռը բաց պտի ըլիլ ճամփորթնու համա, խեղճերի համա թիկնգուք պտիս ըլիլ, ամեն տեղ արդարութիւն ու ճշմարտութիւն պտիս ունենալ: էս ա քու ջրատար մօր խնդիրը, հմի կէն եղը Աստօծ քի հետ:

Շուշանի էս վերջին խօսքերին էլ ջուզար տուող չը կար:

Բաժանուցին մէր ու որդի իրարից, համա ինչ բաժանուցին, դու խօսի կարգացող լեզուս դուռում չի, չունքի ես էլ եթիմը նման մին ու ճար եմ, էդ օրը իմ գլուխն էլ ա էկել... խախնիքս թիկնուում ա, սիրտս թրփ-թրփում... միայն էս քանը միտս ա, որ մին, հինգ,

խտրակոմս անհաւորութեանց, մեր կարծիքով ոչինչ օգուտ չեն տալ գործին եւ պարբերական թերթերը կուսակցութեանց բերան դառնալով միայն գուցէ մասնաւոր օգուտ ունենան, թերթերը տւելի ծախվին: Բայց հարցը դրանով աւելի կանոնաւոր եւ յաջող վճիռ չի ստանալ: Գրգռված ժողովուրդն ընդունակ է միայն ճշուում գործ դնելու ընտրող ժողովների վերայ ինչպէս փորձերն էլ ցոյց տալին: Այս էլ զնաս է գործին: Մեր ընտրվողներն այնքան սակաւթիւ են, որ ընտրող ժողովներն նրանց ամենքին էլ լաւ ճանաչում են, մանաւանդ եկեղեցական դասը:

Մեր կարծիքով մամուլը զխաւոր նպատակն ու ճիշդ պիտի լինի լուսաւորել ընտրող ժողովները թէ սուր որպիսի յատկութեանց տէր անձն պիտի ընտրեն, ինչ պարտականութիւնք եւ պահանջներ կան հայրապետից եւ զոցա կատարման համար ինչ ընդունակութիւնք կարեւոր են ծանօթացնել ժողովները ս. Աթոռի եւ ժողովրդեան վիճակի եւ կարեաց հետ: այն հանգամանքներին հետ, որոնց մէջ պէտք է գործէ ապագայ հայրապետը, որպէս զի նոքա ըստ այնմ էլ անեն ընտրութիւնը: Իսկ ժողովրդի վերաբերութեամբ մամուլը պարտական է նրան

տալը, քան, հարկը, հազար հետ իրար պաշպելուց եղը «մնաս բարով» «գնաս բարով» խօսքերը լուռց ու մէր ու որդու բաժանուցիլ իրըմանցից:

XVI

Եկեղեցիների զանգակների զրնգոցները վեր էր էլել իրար խառնուել, արեւ էլ իր վերջի կանանչ ու կարմիր շօթիւր գծել էր քաղաքի աղեղնալիքների ու զանգաւաղների խաչերի վերայ, նրանց հետ խաղ անում, հուր-հրիւս տալի, չը տես-խառ մարդու զանազանում, ըրմացկատար անում:

— Օ՛հ ծօծ, օս ինչ ա, տղէք, դըրուտ որ քաղաք... պահ... պահ... պահ... ըլխաբընում ինչ խառնարդի կայ, չիմ ըստի են թօփ էլել, տուն չիներ, բուն դրել... ու... աղեղնալիքներ... աղեղնալիքներ... ձի... այն քիչ քաղաք, ես իմ Աստօծը, որ տեսնուլ ինչ ասես ասէ: Վահ... բաղեր էլ կայ բաղեր... այլ քիչ օյն... քաղկցիք էլ են քաղմանուլ թիւնում...

Ըսէնց ըրմանալէ իր բարեկամի հետ խօսալ է ձին քաշելով դիւր էր դալի եթիմը Թէլէթի դաշի վեր կեռու մեռ ճամփով:

— Հա, որդի ես, մէջը որ մտնուք դու ըրմանալը ընդի տես:

— Սրանից աւել էլ ինչ պտիմ ըրմանալ, ընդի խում պողաւոր ուղտեր չեն ըլիլ:

— Պօղաւոր ուղտեր, խի չես ասում կանանչ ուղտեր:

— Ախպեր, էդ էլ չես հանաք անում:

լուսավորել, որ նա առանց կուսակցական ոգւոյ ընտրէ պատգամաւոր արժանաւոր անձանց, ցոյց տայ թէ պատգամաւորն ի՞նչ յատկութեանց տէր անձնաւորութիւն պիտի լինի: Իսկ գրգռել ժողովուրդը՝ կուսակցական ոգի դնել նորա մէջ կը նշանակէ ստեղծել մի կոյր ոյժ, որ միայն քանդելու չնորհչէ ունի և ոչ թէ շինելու:

Թող համոզված լինի մամուլը, որ ոչ մի նշանաւոր հայ եպիսկոպոս չի ցանկանալ այս և այն պարբերական թերթի հովանաւորութեան ներքոյ մտնել և կարծում ենք, որ այդպէս վարվել կաթողիկոսացու անձնաւորութեանց հետ յարմար էլ չէ պաշտօնին: Մենք չափազանց աշխարհականացնում ենք թէ՛ ընտրութեան եղանակն և թէ՛ պաշտօնը: Նկեղեցու զուլուն ու Տէրըն էլ ունի իշխանութիւն և այն մեծ իշխանութիւն այդ ընտրութեան մէջ — և նա պէտք է այդ գործ ղնէ ժողովուրդի ընտրած ներքին միջնորդութեամբ ս. Նիկիեցւոյ մէջ, ուրեմն և նորա բաժինն ու իշխանութիւնն էլ մոռանալու չէ, որպէս զի ընտրութիւնը հայրապետի լոկ մարդկային չէ լինի:

Մենք կարճ տեսքինք, կը յուսանք, որ մեր մամուլի ներկայացուցիչը առանց նախապաշարման անկեղծութեամբ կ'ընդունեն մեր ասածն և իրանց խոհմանութեամբ և հեռատեսութեամբ, աւելի ընդարձակօրէն կ'ըմբռնեն խնդիրն և թոյլ չեն տալ այսպիսի սուբբ և ծանրակշիւ հարցի մէջ մանկանց և իմաստակաց զիմարտաւ հանդիսանալու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ.

Յաւայի է տեսնել թէ ի՞նչեր են կատարվում Շուշուում: Հոգեւոր երկսեռ ուսումնարանների անմխիթար դրութիւնը տեղական երկուսարդների թղթախաղութիւնը և անբարոյականութիւնը բացի այդ, մէկը որ աւելի տիրապետող է դարձել, այն է բռնի ամենակողմնակի ցաւ են պատճառում աղքատ սրտերին: Թողնելով առաջի երկու կէտերը, միայն ուշադրութիւնս դարձնում եմ վերջին վերայ:

Առ հասարակ ընտանեկան բաղձրութիւնը կախուած է ամուսնական սիրոյ կողմից: Շատ պարզ է և հասկանալի որ մի որ և է ընտանիք բաղձր է տեսնել ծնողաց, թէ ինչ ընտանեկան համբաւութիւն կայ իւր որդւոյ և հարսի մէջ, թէ ինչ պէս նոքա ձեռք տուած միշտ աշխատում են ընտանիքի բարկաւորութեան համար, թէ ինչպէս նոքա քաղցրութեամբ և սիրով խնամում են իրենց այլ որ ծնողաց: Բայց դառն է և միանգամայն անտանելի որ դորա հակապատկերն ենք տեսնում այն ժամանակ երկուսն էլ կորած են, միշտ գոտուած թիւն շատ ժամանակ ծեծ: Հայհոյանք և այլն: Այս գլխաւորապէս հետեւանք է բռնի ամուսնութեան, որը այժմ կատարւելու տիրում է մեր Շուշուում ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում ինչպէս ասացի վերեւ:

Լուս: Ո՞ր է մեղաւորը ի հարկէ առաւելապէս ծնողները: Բայց նոքա լինելով ազգաւ և մի և նոյն ժամանակ շահատէր, իրանց որդիներնց երջանկութիւնը, միայն գտնում են հարստութեան մէջ: Եթէ աղջկան ուզողը հարուստ է, այն ժամանակ նոքա առանց հետաքրքրուելու նրա բարոյական և ընտանեկան կեանքով ու պարագիծով ամենայն ուրախութեամբ ընդունում են թէ երիտասարդ և թէ միջնահասակի առաջարկութիւնը, չը նայելով որ օրիորդը ցանկութիւն չ'ունէ նորա հետ ամուսնանալու: Այստեղ օրիորդի կամքը նշանակութիւն չ'ունէ, նա հաւասար է ոչնչի, զեռօրի: Ծնողաց կամքին հակառակ չէ կարող որովհետեւ այն ժամանակ նա կը լինի հասարակաց խօսակցութեան առարկայ, կը լինի հասարակաց աչքին մի տարօրինակ օրիորդ, չէ կարող հասարակութեան մէջ դուրս գալ, ծնողները և բարեկամները և բնակները շուռ են տալիս և մի և նոյն ժամանակ համարում է...: Այդ պատճառաւ նոքա միշտ լուսութեամբ և ակամայից հաղանդվում են ծնողաց կամքին, թէ և իրենց ապագան դառն ու թունաւոր է:

«Նամուսը» մեծ նշանակութիւն ունէ մեր ժողովուրդի համար, անհամուս է այն օրիորդը որը չէ հնազանդվում ծնողաց կամքին, երեսը բաց զօրնում է օտարների հետ ծանօթանում: Խօսում է և այլն և այլն: Նամուսաւոր և համեստ է այն օրիորդը որը քաշուած տան անկիւնը երեսը ծածկած լուս ու մուշ իրա ծնողաց հրամաններն է կատարում և նոքա բռնի ամուսնացնելու դէմ ոչնչ չ'ունէ: Եթէ

մեր ժողովուրդը այնքան ազգաւ է որ չէ կարողանում հասկանալ թէ իր որդւոյ երջանկութիւնը կախուած է հարստութիւնից, ապա ո՞ւմ վերայ է դրած այդ սրբազան պարտականութիւնը — մեր հոգեւորականներին և հասակացող դասի վերայ: Բայց տարարազարար մեր հասակացողները միշտ իրանց հեռու են պահում հասարակութիւնից և երբեք չեն խառնվում և չեն աշխատում այդպիսի ցնասակար սովորութեան առաջը առնել: Ուրեմն, այժմ պարտականութիւնը մնում է մեր հոգեւորականների վերայ: Բայց դարձեալ տարբարազարար մեր հոգեւորականները մեծ մասամբ նշանակութիւն չեն տալիս դորան: Նոքա ամենայն ուրախութեամբ ընդունում են կատարելու ամուսնական սուբբ կարգը միայն թէ այդտեղ նոքա ունենան շահ: Առանց հարց ու փորձ անելու օրիորդի կամքը նոքա կատարում են ամուսնական կարգը որովհետեւ ծնողները տեսն են «Տէր-Տէր» քրմատաղ մեր խրեարքը փսփս: Այս երկու խօսքը բաւական է, նա պատրաստ է ամենայն ուրախութեամբ կատարելու օրէնքը, մինչև անգամ բռնութեամբ: Ես ինքս շատ անգամ տեսնել եմ որ պսակի ժամանակ քահանայ կամ ծնողները համաձայնութիւն են ստացել աղջկանից բռնութեամբ ստիպելով նորան գլուխ տալ (որ նշան է համաձայնութեան), կամ թէ չէ յետեւից կանայք ուժով կռացրել են օրիորդի դուռը:

Յարգելի ընթերցող, դուք չը կարծէք թէ միայն օրիորդներին են բռնութեամբ ամուսնացնում, այդ պատահում է և տղաների հետ, բայց

այդ դիպուածը յաճախ պատահում է օրիորդների հետ, քան թէ տղաներին: Բայց այդ շատ ժամանակ տղաները չեն հնազանդվում ծնողաց կամքին, ուստի իմ ուշադրութիւնը դարձրել եմ տեղի այդ անպաշտպան արարածների վերայ: Մեր լրագրիչների պարտականութիւններիցը մէկն է և այն, որ նա աշխատէ իւր ոյժի չափ մաքրել մեր ընտանեկան կեանքը, նա յողանջներ ի լոյս ընծայելով բռնի ամուսնութեան դէմ կարծեմ, որ կարող է օգուտ բերել մեր ժողովուրդին: Ես չեմ ուզում ասել որ մեր լրագրութիւնը դուրս մտնին Նիկիեական լուսութիւն է պահել ոչ, նա ապիթ է ունեցել խօսելու այդ հարցի վերայ, բայց շատ քիչ: Ուստի ես մեր լրագրութեան ուշադրութիւնը դարձնում եմ դորա վերայ և ցանկալի էր, որ առօրեայ խնդիրներից մէկը դարձնէին ընդհանրապէս խօսելով բռնի ամուսնութեան մասին: Ես աւելորդ չեմ համարում մի քանի օրինակներ բերել, որոնք նորերում են պատահել:

Ահա մօտ վեց ամիս կը լինի, որ ակամայից մի օրիորդ ամուսնացել է մի սղայի հետ: Ամուսնութիւնից մի քանի ժամանակ անցնելով, օրիորդը մոտաանցութիւնից հիւանդացում է: Տղան այդ տեսնելով թողնում է նորան և հեռանում օտար երկիր, իր «բէթը» արածիւ անելու, ու մինչև օրս էլ չէ դարձել, իսկ արիւնը անկողնու մէջ տանջվում է:

Մի ուրիշ դէպքում, որը աւելի եղբրական է և օրին ևս ակնառան եղայ, վաճառական մի որը կը լինի մտաւորապէս 45 տարեկան, առաջարկում է ամուսնանալ 14 տարե-

էն թաւուր հայվարայ 1) քաղաք ա... որ ով գիդէ կանանց ուղղեր չէ որ պողաւոր ուղղեր էլ ըլին:

— Մի խօսքով, ինչ սիրտը ուզէ, կայ:

— Բաս էդու դեօրայ, ոնց որ ասում են, ծախ կաթն էլ կը ճարուի ըսի, ասում էր Նիթիմ տաքացած:

Ըսէնց հազար ու մին բանի վերայ խօսելով հասան քաղաք:

Քաղաքի ֆայտօնները գրգռողը, խախի զըժվեթցը, բարկանքերի բղաւցը, իրար ջըրու քնքնքներ թընթընկողը, բախկանու աշխարհու ծըժըժողը, որ կունքնիւրուն վերքալած մի կունց իրանց աղաքի կարմիր բոխի ու կանանչու վրա ջուր ին ածուռ ու մի կունց ձէն տալի՝ «բաս, աղէք ջան, ձեր հոգուն մատաղ, մի էսթէնը մուտիկ արէք է... պահ... պահ... նընդրած ա... մէկէլ ըն էլ քուչի մէկէլ կօխիլը դրանց ջըրու, որ ծիկա չէր տալի վրացերէն» արտ ծվանիլի, ծվանիլի, պատարձալիս դալրէփուլի, կօխաւ վլիւիս մօտաուլի (արա կանանչին, կանանչին, նորաճարի քաղած, կունգուղալիք իւր բերած):

Նիթիմը զիժ էրինջի պէս էլ գիդեր ոչ թէ որին մտիկ անէ, ես դէսը էր լըլըլ կոտում, ես դէսը բերանը բաց անում պեղնում, խեղճէ էն դադամ դէս ու դէն պեղացաւ, որ շինքը բռնուեց, էլ շատ մտիկ կանէր թէ իր բարեկամը վըրէն չէր ջըրուել:

— Ի՞նչ ես երգար խըլիտում, ուշաքը քի վրա պահի, թէ չէ մին էլ կը տեսնու Ֆայտօնի ձիանու ոտի տակը

1) Ահադին:

ընգար: Եղուց արիւնին ման կը գանք, ամեն բան կը տեսնու հմի քիչ տեսնելը չուտ իրար աղաք գծի, հրէս որ դի որ ա տուն կը հասնուի:

Առաւօտը Նիթիմը իրան բարեկամի հետ քաղաքի լուս տեղերը, դուքան բազարները չի՛մ ման էկաւ, ամեն բան տեսաւ, համա մինը էլ ա նրան դիւ չի էկան:

— Հմի ևս հպտում, որ էս տուքան բաղարատները Ուցնայ շնաների նման խալիլին խփափորում չեն... Նիթիմը էս հէնց խօսալով անցկացաւ մի քանի քուչայ, մին էլ մի դափիլ որ տեղից որ էր մի մշակ եղայ հայվարայ 10 իր դաղանք բեռը չալիլն քափում քրտնքում կորաց էկաւ Նիթիմի աղաքովը անց կացաւ: Մշակին տեսնելուն հազաի մի գիրթ կաղնեց, ոտից հիւկիլ գլուխը մի լաւ քննեց, հոգեց քաշեց ու ըսէնց հարցրուց իրան բարեկամին.

— Բիձի, բիձի... էս ինչ մարդ ա, էս ինչ ա տանում:

— Դրան քաղկից ասում են մշակ, էն բեռը ուրիշնը ա, տանում ա իր տիրոն տունը:

— Մուսնայ, թէ փողով...

— Փողով... տանելահախը շատ տան մի արատի ես ձ շահի:

— Ո՞վ... է... 5 շահու խաթեր մարդ ըթէնց քրտնքում կորչի... այի քեզ արդար աշխատանք. «բրտամը երեսաց քո կերիցես դժայ», դրուտա սրա բանը ա...

Նիթիմը սաղ քաղաքը էլ օրը ման էկաւ, դրան մի բան էլ ա դիւ չի էկաւ,

ամենն էլ դրա աչքումը խափեփայ էրեւացին, բացի մշակից, որ 5 շահու խաթեր արին քրտնքում կորած 10—15 փուլք բեռը չալիլն կամանց-կամանց անըլով ոտները փոխում էր, իր ճակատի քրտնքով քուչի քարիւր դրում:

XV II

Թամամ մի տարի Նիթիմը քաղաք մտնելու օրից բռնած իր բարեկամի տանը մնաց, որ բալքի էլ մի տարումը քաղաքի ամեն բանը սվորի, «աչքը բացուի, Մի տարուց եղը մտաւ Ն. ուսումնարանի առաջին դասատունը, էն տեղից էլ տարէ ցտարի դասատունը փոխելով բարձրանում էր դրա բարձր դասատունին:

Նա իրան մի սովորութիւն էր չինել դասերը միւս աշակերտների նման անդիւր չէր անում—նրանք էն էր իր դասը մի երկու հետ կը կարգէր, ինչ որ բէինը կը մտնէր, էնպով էլ ռաղի կը կենէր: Նրա ես խախախի իրաթիւր մի քանի վարձարեւոնի նրան իրանց աչքերիցը դձել ին, նրան աղարկում, ծոյլ ին կանչում. բայց Նիթիմը էլ իրան էն էր քըլում, իրան սաղը ածում, օչում անգամ չէր դնում:

Մի օր Նիթիմը մաքի եղնայ ընգած իր օթխալումը կարդում էր արժանալիշատակ Ն. Արտիկանցի Վէլքը Հայաստանի» 132 երեսում դրած Լօւցոնց վերայ էս խօսքերը՝ «էս էր պատճառը, որ թուրքերը էս օր էլ էս ձորերովը անցկենալիս էնքան ք բափի լեռ. քարիցը չեն վախում և գետի կատաղութիւնից, որքան քարափնելի բերնիցը, որքանց որ քաջ Լօւցոնց թվանքի գուլեն կամ

լըլըրանի թուրը անցկենողի գլուխը սուխ պէս ին թուցնում ու իրանց թշնամու մարմինը իրանց ձորերին մատաղ անում...

Նոր պրծել էր Նիթիմը էս խօսքերը, էն մուղաթին մի գեղացի Նիթիմի տան քուչի դուռը թրխ-թրխկացրեց. ասած ա՛ մի էձը մի իծի համար թանգ աբժէ քանց 100 զլուխ ոչխարը: Նիթիմը դեղացու գլուխը տեսնելուն հաղաղ, ուրախութիւնիցը գիտէր ոչ թէ ինչ անէ. 10 ոտ նարդիւանը էրկու լօւցում ցածացաւ իր երգացու ձողը ընգաւ: Մի քանի նմուտ իրար հալ հարցնելուցը եզը գեղացին իր փափախի ծալից մի ծալիլուրած նամակ հանեց տուեց Նիթիմին:

— Քու արաբալացիդ Սիւսն շատ ու շատ բարով էր անում քի, էս գիրն էլ նա զըլեց, ինձ թամբա՛ ա արիւ, որ որ դի որ ըլիս գտնում ու իմ ձեռովը քի տամ:

Նիթիմը ուրախացել էր ուրախացել, երբ գեղացին ասաւ, որ նամակը Սիւսնից ա, դ՛ա ուրախացաւ, ուրախութիւնիցը նրա աչքերը արտասուքով լցուեցին, մի քանի նմուտ միացել էր նամակի երեսին պեղացած, վերջապէս գեղացուն իր օթխալը մեծերց:

Էս էր գրել Սիւսն իր ընկեր Նիթիմին: «Սիրելի արաբը.

Նիթիմ ջան.

«Նախ եղբայրական սիրով բարեւ մատուցանեմ ձեր հրամանը և եթէ մեզանից կը հարցանէք փառք Աստուգեղեցաւորի եօլա ենք գնում և ձեր սիրելի տեսութեան կարօտը երբ քաշում

էս աչունք 5 տարին կը թամամուի, որ դու քաղաք գնացիր, ինձ թողիր էստեղ եթիմ 1), այի գիդի մեր անցկացրած օրեր, երանք էլ կ'արժանանանք թէ չէ իրար կարօտ պոի մեռնենք:

Շատ վախա միտս ա գալի մեր էն խօսքերը, որ ասում էինք թէ՛ «մարդ գեղ տեղը քաղաքավարութիւն չի սվորել» դրուտա որ չի սվորել, մեզ քաղաքավարութիւն սվորցնողին մեր իրեցնին պոի ըլին, չունքի ըսօր քիչ թէ շատ նրանք են մեր միջի բան հասկացողին, հմա բանից դուս ա գալի, որ նրանք դ՛ա. են վրթապախի խաչիցը դուս էլել: Նոր իմացայ քու դողըր դ՛մի հակացայ—որ դու լուս եո ունում, որ մեր կողմերի մի քանիների պակասութիւնները բերաներովը ես տալի, իայ տառաւորում ես, միայն թէ, Նիթիմ ջան, քի քիչ մղօթի կաց... շատ բան ու նիմ գրելու, հմա ինչ անեմ, էն դրամ գրավարժ չեմ, որ սրտիս ամեն բանը գրեմ: Ասալով թէ մի օր իրար տեսութեան արժանանանք, ընդով չիմ կը պատմում:

Գիդեմ կուղես տվարի ու ոչխարի հաղ խմանալ, փառք Աստուծոյ լաւ են: Մնում քու տեսութեանը կարօտ քու արաբը:

Սիւսն:

Ի գիդն Իկհատ, 18\*\* թ.

(Կը շարունակվի).

կան մի օրիորդի հետ: Նորա մայրը  
ամենայն ուրախութեամբ ընդունում  
է պարոնի առաջարկութիւնը (հայր  
շուքէր): որովհետեւ ունէ գեղեցիկ  
տուն և հարուստ խանութ: Շատու  
լով հարստութեամբ, մայրը զո-  
հում է աղջկան: Թէև օրիորդը սի-  
րում էր օւրիշին և այդ մայրը լաւ  
գիտէր: Այդ պարոնը այրի է և ու-  
նեցել է մի քանի զաւակներ, որոնք  
վախճանուել են, բայց ամենափոք-  
րից, որը է 8 տարեկան տղայ:

Իմ՝ յոգուածիցս, արդէն կարելի  
է եզրակացնել, որ այդ սովորական  
է Շուշու: ուստի ոմանք ինձ հարց  
կը տան. «Եթէ այդպէս է, ինչո՞ւ  
մինչ այժմ լուծիւն էք պահպա-  
նել»: Արդհետեւ այդ թողնում էի  
տակը հմուտ և սուր գրիչներին որ-  
պէս զի նորա պարզ ցոյց տալով  
դորա փնտախար և դառը հետեւն-  
քը կարողանան աւելի ազդեցութիւն  
անել բռնաւոր ծնողներին սրտերի  
վերայ: Բայց տեսնելով որ բոլորն  
էլ լուծիւն են պահպանել և ոչ  
պէ և զուգում է զիստակցաբար և  
թէ՛ անդիտակցաբար պաշտպանել  
այդ խեղճներին. ուստի զիմեցի իմ  
անդօր և թոյլ զրչն: Յոյս ունիմ  
որ մի քանի օրերէն և սուր զը-  
րիչները ուշ կը դարձնեն այդ հարցի  
վերայ:

Յուսանք և սպասենք:

Յ. Գ.

Թիֆլիս, 13 սեպտեմբերի.

ՍՏԱՆԻՍՊՈԼ

19 սեպտեմբերի.

Վաղուց է արդէն, որ մեր հայ  
պարբերական թերթերի մէջ Ստա-  
նիսլոյն ոչ մի լուր չէ հաղորդված  
և ի՞նչ պէտք է հաղորդվէր քանի  
որ այս նահանգական քաղաքի մէջ  
կարծես թէ մի տեսակ անշարժու-  
թիւն է տիրում: Վաճառականու-  
թիւնը— ինչպէս ամեն տեղ, նոյն-  
պէս և այստեղ— ընկած է. երկա-  
թուղին բաւական հեռի լինելով  
քաղաքից կողմնակի այցելողներ ա-  
մենէն չը կան. ահա՛ գլխաւոր  
պատճառը քաղաքի օր ըստ օրէ ընկ-  
նելուն:

Անշուշտ տարիներում մեր հայ  
թերթերի մէջ երբեմն երևացել են  
մի քանի թղթակցութիւններ, ու-  
րեմն և ընթերցողներին յայտնի է  
որ այստեղ էլ կայ մի փոքրիկ հայ  
հասարակութիւն, բաղկացած մօտա-  
ւորապէս 70—80 հայ ընտանիքնե-  
րից, որոնք մեծ մասամբ պարսպում  
են փաճառականութեամբ: Հայերը  
ուրեմն մի նորեկեցիցի որը կառու-  
ցել է յայտնի Վոլկասու յայտնի  
հարուստ պ. Մ. Պոպովիանցը:

Այստեղի հայ հասարակութիւնը  
մինչև այսօր կարողութեամբ մի յար-  
մարաւոր սեպհական շինութեամբ ու-  
րի մէջ կարելի լինէր տեղաւորել  
ծիսական դպրոցը: Թէև քսան տա-  
րիներէից աւելի էր, որ այստեղ զըպ-  
րոց կար լայց անուանով միայն և  
ոչ բառի բուն նշանակութեամբ,  
որովհետեւ ամենայն տարի դպրոցը  
խաշտարած քուրդի շարժական վը-

րանի նման թափառում էր մէկ տե-  
ղից միւս տեղ և շատ անգամ տե-  
ղաւորվում էր այնպիսի շինութեա-  
նեւում որոնք պատիւ չէին բերում  
դպրոցի անուանը աւելորդ է ասել  
որ դպրոցի այդ շարժական դրու-  
թիւնը շատ անգամ փնտախար էր նո-  
րա թէ՛ նիւթականին և թէ՛ բա-  
րդականին: Պարոն Մ. Պոպովիանցը  
տեսնելով դպրոցի ողորմելի վիճակը  
և հասկանալով ուսումնարանի բար-  
ձրը նպատակը— մանաւանդ հայերի  
վերաբերութեամբ — մարդասիրա-  
կան հոգւով վառված կամեցաւ ընդ  
միշտ վերջ դնել դպրոցի տանջանք-  
ներին, և ըստ իւր խոստման հիմ-  
նարկեց եկեղեցու գաւթում միայն  
պիսի գեղեցիկ շինութեամբ, որը բո-  
լորովին յարմար է ուսումնարանին:

Ներկայ ուսումնական տարվայ սկզ-  
բին հոգաբարձուները կարգադրու-  
թեամբ, ուսումնարանը արդէն զե-  
տեղում էր այդ շինութեամբ մէջ:  
Սկստման 1-ին սովորական դո-  
հացողական մաղթանք կատարվելուց  
յետոյ, սկսվեցաւ ուսումը, իսկ շե-  
նութեան օրհնութիւնը հոգաբար-  
ձուութիւնը յետաձգել էր մինչև պա-  
րոն Մ. Պոպովիանցի գալուստը, որ-  
պէս զի ուսումնարանի մեծ կառու-  
ցանդի ներկայութեամբ կատարէր:  
Ամսոյ 16-ին ս. պատարագից յե-  
տոյ հոգեւորականութիւնը զգեստա-  
ւորված ժողովրդեան խուռն բազ-  
մութեան հետ— զիմեց զպիսի զըպ-  
րոցը և կատարեց շինութեան օրհ-  
նութիւնը: Օրհնութիւնից յետոյ  
հոգաբարձութիւնը ներկայացրեց ու-  
սումնարանի 1883/4 թուակ. ելումը-  
տից հաշիւը, որ կարգաց արժ. Բ.  
քահ. Բէկիւրիւնեցը, որից երեւե-  
ցաւ, որ ծախքը մուտքից հանելով  
— մնում է հոգաբարձութեան ձեռ-  
քը 179 ու:

Հաշիւից յետոյ գնդապետ պ. Գ.  
Շահխանդեանը մի երկու խօսքով  
բացատրեց թէ՛ ինչ նշանակութիւն  
ունի դպրոցը եկեղեցու համար և  
եկեղեցին դպրոցի համար: Յետոյ  
հայոց լեզուի ուսուցիչ պ. Ա. Լա-  
զարեանը կարդաց մի ձառ. որով  
բացատրեց կրթութեան բարձր նշա-  
նակութիւնը: Միջոցներում աշա-  
կերտաց և աշակերտուհեաց երգե-  
ցիկ խումբը ունելով ի զուէս խմ-  
բապետ արժ. Գեորգ քահ. Զաքար-  
եանցին, երգում էր զանազան երգեր,  
որոնցից առաջինը «Ով Աստուած  
անմահ» երգը շատ լաւ տպաւորու-  
թիւն գործեց հանդիսականների վե-  
րայ: Պարոն Լազարեանցի ձառախօ-  
սութիւնից յետոյ հոգաբարձութիւ-  
նը հանդիսականներին հրաւիրեց  
միւս սենեակը, ուր պատրաստած էր  
մի համեստ նախաճաշիկ. սենեակի  
արեւելեան պատի վերայ կախած էր  
կենդանի ծաղիկներից պատրաստած  
«Մ. և Պ.» տառերը— ի պատիւ  
դպրոցի բարերարի: Նախաճաշիկի  
ժամանակ արժ. Գեորգ քահ. Զա-  
քարեանը— բարձրացնելով բաժա-  
կը— հրաւիրեց հանդիսականներին ու-  
շաղթութիւնը զպիսի ինքը. բնաբան  
աւանելով աւետարանի հետեւալ  
խօսքերը. «Մարդ բոլոր ի բարի գտն-

ձուց սրտի խրոյ հանէ զըարիս» և  
կարճ աղոյւ խօսքերով բացատրեց  
բարերարութեան նշանակութիւնը,  
այնպէս որ մեծ տպաւորութիւն  
գործեց հանդիսականների և մանա-  
ւանդ բարերար Մարգար Բարդուղ-  
մեանան Պոպովիանցի վերայ, որի  
աչքերում երեւեցան արտասուքի  
կաթիլներ: Վերջացնելով խօսքը ա-  
ռաջարկեց ամենքին խմել այդ մեծ  
բարերարի կենացը, որ ընդունուե-  
ցաւ մեծ համակրութեամբ:

Այսպէս ահա վերջացաւ դպրոցի  
օրհնութեան հանդէսը և ամենքը  
յայտնելով իրանց խորին շնորհա-  
կալութիւնը թէ՛ դպրոցի հիմնա-  
կուէն և թէ՛ հոգաբարձութեանը,  
ցրուեցան— ամենելով իրանց հետ մի  
ուրախ տպաւորութիւն:

Մենք ևս միւսներին հետ յայտ-  
նում ենք հրապարակաւ մեր խորին  
շնորհակալութիւնը աղա Մ. Պոպով-  
իանին իւր շահաւէտ բարերարու-  
թեան համար և հոգաբարձու պա-  
րոն Գրիգոր Թիւթիւնջեանին, որ  
ամենաանուշաւ աշխատողն է դըպ-  
րոցի համար: Վերջինս իւր հոգա-  
բարձական պաշտօնում մի օրինա-  
կիւն անձնաւորութիւն է, որի նման-  
ները միայն արժանի են հոգաբար-  
ձու տիտղոսին:

Ե. Ս.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

«North China Herald» լրագիրը հա-  
ղորդում է Չուան-Լի-Ֆանին չքաղաքա-  
կանը, որ ուղղած է օտար տէրութեանց,  
Ահա նորա վերջի մասը. «Այնք Սմոմ  
տեղի ունեցած ցաւալի զէպը առիթ  
տուեց Ֆրանսիային սխալ մեկնութիւն  
տալու այն ժամանակի մասին, որ դաշ-  
նադրութեամբ որոշած էր չինական զօ-  
քերը Տօնկինից դուրս բերելու համար  
և այն հիման վերայ Ֆրանսիան պահան-  
ջում է վարձատրութիւն Չինաստանից,  
Այս ոչ միայն պայմանագրի երրորդ յօ-  
դուածին հակառակ է, այլ և այն անհի-  
մըն պահանջը անօրինակ է աշխարհիս  
երեսին: Որովհետեւ Չինաստանը բոլոր  
ազգերին հետ խաղաղութեան և բարե-  
կամութեան մէջ է և ցանկանում է այն  
զգացմունքները երկարատեւ պահպանել,  
ուստի և նա չէ կարող ճանաչել այն-  
պիսի անսնունք բաւարարութիւն և զօր-  
ծել հակառակ միջազգային օրէնսդու-  
թեանում: Եթէ զանազան տէրութիւնը,  
որոնք երկրորդ ժամանակ բայրեկաւ են  
եղած Չինաստանին, տեսնեն, որ վեր-  
ջինն վճարում է այսպիսի անհեթեթ  
տուգանք, անշուշտ նոքա կը զգան խո-  
րին ցաւ: Զանազան ազգերի վաճառա-  
կանք պայմանով բաց զանազան չինա-  
կան նաւահանգիստներում հաւաքված  
են և Չինաստանը պարտը ունի նրանց  
պաշտպանելու, այս պաշտպանութիւնը  
տարածվում է և Ֆրանսիայի ներքին վե-  
րայ— այն է պաշտպանութիւնը, վաճա-  
ռականներին, քաղաքիներին, որոնք զը-  
տանվում են Չինաստանում: Բայց եթէ  
Ֆրանսիան, պահանջելով վարձատրու-  
թիւն, անհանդիստ կ'անէ այդ նաւա-  
հանգիստները ուժարկով, որ տպաւո-  
նում է առոււտրի դադարում և վնաս  
սեպհականութեանց և այլն, Ֆրանսիայի  
պարտքը կը լինի հատուցանել մինչև  
վերջին սանտիմը իւրաքանչիւր իրաւա-

ցի վնասը և Չինաստանն ոչ մի պատաս-  
խատուութիւն չանձն առնել չէ կա-  
րող այն մասին: Գաղափարութեամբ Չի-  
նաստանի հետ կապուած զանազան տե-  
րութիւնք էլ պարտական են նոյնպէս  
արգելել իրանց հպատակներին, որ վա-  
ճառականութեամբ են պարսպում զա-  
նազան տեղերում, զաղոյսի օգնելու ֆը-  
րանսիացիներին, հայթհայթելով սրանց  
պաշար, պատերազմական չիտոյքներ և  
այլն համաձայն միջազգային պարտակա-  
նութեանց: Այսպէս ամեն կողմից զըն-  
նելով ինդիքը, Նամընը ուղարկում է  
զանազան տէրութեանց յառաջընթաց  
գաղափարութեան «պատճէնը» Ֆրանսիա-  
կան և չինական լեզուներով, հաղորդա-  
կութիւնք, նամակներ և այլն, որպէս զի  
այդ տէրութիւնք մանրամասնօրէն խու-  
զարկելով խոյրը առանց կողմնապա-  
հութեան կարող լինին վճռել ով է ի-  
րաւացի և ով յանցաւոր և ում կողմն է  
արդարութիւնը»:

Աւտրիական կայսրը Մաճառստանի  
պատգամաւորաց ժողովի նիստերը բա-  
նալու ժամանակ իւր գահական ձառը  
վերջացնում է հետեւալ խօսքերով. —  
«Մեր յարաբերութիւնը Գերմանիայի  
հետ ունին ամենամեղմ թարեկամու-  
թեան բնաւորութիւն, նոյնպէս և միւս  
տէրութեանց հետ մենք դատվում ենք  
յոյժ բարեկամական յարաբերութեանց  
մէջ, ուստի և մենք վստահութեամբ կա-  
րող ենք յուսալ, որ դուք անվրդով ար-  
տաքին դժուարութիւններից, կը նուրբը  
ձեր գործունէութիւնը մեր հաւատարմ  
Մաճառստանի բարօրութեան: Գուք ան-  
շուշտ օգուտ կը քաղէք այս հանդաման-  
քից, որ ողբան հնար է կատարէք այն  
ամեն, ինչ որ նպատակ է մի հաւա-  
տարմ Մաճառստանի նիւթական և մը-  
տաւոր զարգացման: Գուք օգուտ կը  
քաղէք այն հանգամանքից, որ քաղա-  
քական խոհանութեամբ, առաջն առնէք  
ներքին դժուարութեանց և վերջ տաք  
զրգուծանք, որոնք առիթ են տալիս  
երկրաւորութեան ազգայնութեանց,  
զանազան դաւանութեանց և հասարա-  
կութեան դատակարգելի մէջ, որպէս զի  
այդ ազգերը, դաւանութիւն և դասա-  
կարգերը ս. Ստեփանոսի թաղի բոլոր  
երկիրներում միակերպ լաւարարութիւն  
ստանան իրանց կենակցութեան մէջ և  
կարող լինեն միացեալ ուժերով և ոգե-  
ւորութեամբ նպաստել զահի և հայրե-  
նեաց բարօրութեան ճշդութեան և փառ-  
քի աճելուն:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ.

Ամսոյ 1-ին ս. կարապետի եկեղե-  
ցում հանգուցեալ իշխան Եղան Թու-  
մանեանցի մահուան տարեդարձի առթիւ  
ս. պատարագից յետ հոգեհանգիստ կա-  
տարվեցաւ հանգուցելոյ գերեզմանի վե-  
րայ ի ներկայութեան «ազգականաց և  
բարեկամաց, պատարագիչը սրբազան  
առաջնորդն էր.

\*\*\*

Հեռագիրը լուր բերեց, որ Կիւմի հա-  
մալանի յոգեհանի առթիւ տեղի ունե-  
ցած անկարգութեանց պատճառով, հա-  
մալարանը փակվել է մինչև առաջիկայ  
1885 թ. յունվարը, զեկոմբերի մէկից  
պիտի կազմվի մասնաժողով համալա-  
րանի հոգաբարձուից, կառավարչից և  
պրոֆեսորներից, որ մանրամասն քըն-  
նութիւնից և տեղեկութիւններից յետ  
պիտի սկսէ որոշել, թէ ոյք ուսանողնե-  
րից արժանի են ընդունվելու համա-  
լարան, իսկ աւարտած և զեռ քննու-  
թիւնքը չը վերջացած ուսանողաց մա-

սին պիտի լինի առանձին կարգադրու-  
թիւն:

\*\*\*

Կիւրակէ, սեպտեմբերի 30-ին Թան-  
դոյեան եկեղեցում, ս. պատարագից  
յետ կատարվեցաւ հոգեհանգիստ հան-  
գուցեալ ի. Մ. Թանդոյեանցի գերեզ-  
մանի վերայ, որին ներկայ էին դպրոցի  
աշակերտուհիք իրանց ուսուցիչներով,  
հոգաբարձուներով և բաղմութեամբ ժո-  
ղովրդականաց: Հոգեհանգիստից յետ ա-  
մենքն էլ գնացին դպրոցի դահլիճն, որ  
կատարվեցաւ տարեկան հաշուետու-  
թեան հանդէսը:

\*\*\*

Մտացանք «Արեւելեան Մամուլի» 1884  
թ. յուլիս ամսուայ անտըր. բովանդա-  
կութիւնն է, 1) Եկեղեցաց գաւառ, 2)  
Տեղեկագիր ուսումնական խորհրդոյ  
Ձմեռնից, 3) Սովորութիւն և յառաջագի-  
մութիւն, 4) Տնտեսագիտութիւն, 5) Բը-  
նական գիտութիւն, 6) Հանդէս թէւոց  
7) Առնարանութիւն մեծ. 8) Ռ. Պեր-  
պերեանի ի Միլիզ. վարժարանի, 8 իրն-  
դիր Լյւմիւնայ կաթոլիկական ընտ-  
րութեան, 9) Թղթակցութիւն, 10) Այլ  
և այլք 11) Քաղաքական:

\*\*\*

Ամսոյ 1-ին Միսէթի եկեղեցու տօնն  
էր և մեծ բազմութիւն Թիֆլիզից ըստ  
սովորութեան գնում են ուխտ: Բայտնի  
բան է, որ այսպիսի օրերին հարկ կայ,  
որ թէ երկաթուղու կայարանում և թէ  
ձիաքարէ երկաթուղու կառքերի վերա-  
բերութեամբ առանձին կարգադրութիւն:  
Ընի կարգապահութեան համար, Բայց  
այդ մասին շատ քիչ հոգադրութիւն  
երեւցաւ, որովհետեւ Տրամվայի վերայ  
տեղերը պատերազմով էին տիրապե-  
տում, ոչ կարգ պահող և ոչ էլ անկար-  
գութիւն արգելող կար, եթէ կային է-  
այսպիսի յոյժ նուազ էր նոցա ոյժը կալ  
րիքի հետ համամատեղով: Արդէն այն  
մեծ անկարգութիւն էր, որ կառքի ա-  
ռաջին ու ետեւ փոխանակ ութը հոգու  
— մօտ քսան հոգիք էին խռնվում, այն-  
պէս, որ մարդ կը դժուարանար շուռչ  
քաշելու: Իրաւ է նոյն ճանապարհի վար-  
չութեան օգուտ էր, բայց երթեկողնե-  
րի համար թէ անյարմար և թէ վնասա-  
կար էր: Միթէ կառքը նստելու և իջ-  
նելու համար մի կարգ որոշին ու պահ-  
պանելը մի դժուարին գործ է, ոչ, եթէ  
միայն այդ մասին հոգացող և մտածող  
լինի:

\*\*\*

Երէկ երէկոյեան ժամը 11 1/2-ին ատեն-  
ները բժշկական նոր խորհրդակցութիւն  
ը տեղի ունեցաւ Ամեն. Ս. Պատրիարք  
Հօր համար:

Նորին Բարձր Սրբազնութիւնն արդէն  
խնամով պատուարժան բժիշկներէն զատ,  
հրաւիրուած էր նաև Տօթթ. Զամպաբօ  
անուանի բժիշկն, որ զեռ երէկ վերա-  
դարձաւ Քոթնիսիկի բժշկական վեհաժո-  
ղովէն և որ արդէն երկու ամիս յառաջ  
սիրայօժար ներկայ գտնուած է երկու  
խորհրդակցութեանց, Տօթթօր Զամպաբօ  
բնաւ վտանգալից չէ գտած Նորին բար-  
ձր Սրբազնութեան վիճակը, գիտալով  
հանդերձ թէ սրտի հիւանդութիւնը կըր-  
նայ յետոյ մեծ դեր կատարել:

Արդ՝ որքան որ հիւանդութիւնը նորա-  
նոր երկուցերով բաւական յուսալ գա-  
ցած է, սակայն դարձեալ երեկի խոր-  
հրդակցութեամբ ու համոզումը գոյա-  
ցաւ բժշկաց քով թէ՛ Նորին բարձր  
Սրբազնութեան վիճակը հեռի է ան-  
յոյս լինելէ, որպէս ոմանք զուշա-  
կել ուղեւոր նախաձեռնած էին. թէ յա-  
րատն կանոնաւոր խնամք հիւանդու-  
թիւնը աստիճանաբար բարձրելով ա-  
ռողջութիւնը պիտի վերահաստատուի,  
և երկար տարիներ են կրնայ ապրել  
միշտ զգուշ լինելով մեծ յազաններ:

